

Ա.թ. հունիսի 16-ին Չեխիայում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանն աշխատանքային այցով գտնվում էր Չեխիայի Չլինի երկրամասում:

Չլինի նահանգապետ Յիրժի Չունեկի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ տնտեսական համագործակցությանն առնչվող հարցեր: Նահանգապետը, մասնավորապես, հետաքրքրվել է Չեխիայում գործող հայկական ընկերություններով և Հայաստանում չեխական ներդրումներով, ինչին ի պատասխան, դեսպանը ներկայացրել է այդ ոլորտում առկա իրավիճակը, խոսել ՀՀ կողմից Չեխիա արտահանումներից, համագործակցության հնարավոր ոլորտներից: Դեսպանը նաև ներկայացրել է բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ներկայումս հայկական կողմից տարվող աշխատանքն ու գրանցված առաջընթացը, անդրադարձել է նաև Հայաստանում գործող ստարտափների գործունեությանը, ԹՈՒՄՈ կենտրոնի և Արմաթ լաբորատորիաների դրական փորձին:

Նահանգապետն անդրադարձել է երկրամասին, վերջինիս վարչական կառուցվածքին և հիմնական առանձնահատկություններին, ներկայացրել Չլին քաղաքի կառուցման և հետագա զարգացման պատմությունը: Խոսելով Հայաստանի և Չլինի երկրամասի միջև համագործակցության հնարավորությունների ու հեռանկարների մասին՝ դեսպանն, իր հերթին, կարևորել է միջտարածաշրջանային համագործակցության հաստատման անհրաժեշտությունը:

Այցի շրջանակներում Ա. Հովակիմյանը մասնակցել է Չլինի Տարածաշրջանային առևտրի պալատի և Արևելյան շուկաների կոնտակտային կենտրոնի կողմից կազմակերպված «կլոր-սեղան» քննարկմանը: Պալատի տնօրեն Իվետա Տաբորսկան ներկայացրել է տարածաշրջանն ու նրա տնտեսական հնարավորությունները, Պալատի և Կենտրոնի գործունեությունը (կցվում է), երկրամասի տարածքում գործող առաջատար ընկերություններն ու Հայաստանի շուկայով հետաքրքրված ընկերությունները (ցանկը կցվում է): Դեսպանի կողմից ներկայացվել են Հայաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման և ներդրումների ներգրավման համար արդիական ոլորտները, Հայաստանում չեխական ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ՏՏ ոլորտում ՀՀ առաջընթացն ու Հայաստանի զբոսաշրջային հնարավորությունները:

Հայաստանի շուկայով հետաքրքրվող գործարարներն, իրենց հերթին, ներկայացրել են մի շարք կոնկրետ բիզնես առաջարկներ, որոնց մասին տեղեկատվությունն էլեկտրոնային փաթեթ-առաջարկների տեսքով հայկական կողմին կփոխանցվի ավելի ուշ (վերելակների վերանորոգմանն ու փոխարինմանը վերաբերող առաջարկը կցվում է, մնացյալը կուղարկվեն ստանալուն պես): Ավելին, Չլինի Տարածաշրջանային առևտրի պալատն ու Արևելյան շուկաների կոնտակտային կենտրոնը ցանկություն են հայտնել ուղիղ աշխատանքներ տանելու և համագործակցելու Հայաստանի տարածաշրջանային նույնանման կառույցների հետ՝ կլոր սեղանների, քննարկումների, փոխադարձ այցերի կազմակերպման միջոցով: Նշենք, որ Չեխիայի տարածաշրջանային նման կենտրոնները տեղեկատվություն են ստանում մայրաքաղաքից նախատեսվող օտարերկրյա այցերի

շրջանակներում անցկացվող բիզնես ֆորումների առնչությամբ՝ հետաքրքրվածություն ունեցող համապատասխան ընկերություններին ներգրավելու նպատակով:

Ստորև ներկայացնում ենք չեխական կողմի հետևյալ առաջարկությունները՝ համառոտ նկարագրմամբ.

«Կլոր սեղան» քննարկմանը մասնակցած Վերարտադրողական բժշկության ոլորտում Չեխիայում հայտնի «IVF Zlin» կլինիկան հետաքրքրված է Հայաստանում մասնաճյուղի բացմամբ, մաստեր կլասերի, ուսուցողական այցերի անցկացմամբ և այլն:

Վերելակների արտադրությամբ զբաղվող «VYMTAHY» ընկերությունը հետաքրքրված է Հայաստանում ներկայումս շահագործվող հնամաշ վերելակների վերանորոգմամբ (նշվեց, որ մեծ մասը չեխական արտադրության են):

«BKP Group» ընկերությունն առաջարկում է ավտոմոբիլային և վերամշակման արտադրության համար նախատեսված նյութերի մատակարարման, երկաթուղային և անիվային տրանսպորտային միջոցների, ինչպես նաև հասարակական տրանսպորտային միջոցների վերանորոգման ծառայություններ: